# Արձանագրություն N 3

« *ՄՀԱԵԿ-ԳՀԾՁԲ 17/1* » ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան

25.09.2017 թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ՝ Շ. Նազարենկո

*Հանձնաժողովի անդամներ՝* Ս. Գասպարյան
Ա.Աղաջանյան

*Հանձնաժողովի քարտուղար՝* Ա. Հարությունյան

**Օրակարգում՝**

**1. Գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցին որոշելու մասին**

---

(Շ. Նազարենկո)

**Ընդունել ի գիտություն, որ.**

"Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ հարցման մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է համապատասխան տեղեկատվություն:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Օվացիա» Պրոդյուսերական Կենտրոն ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է ապրանքի ամբողջական նկարագիրը:

---

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Մասնակցի մասնակցության իրավունքը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

1.2 Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված հրավերում նշված ապրանքի տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ - 0:

1.3 Հանձնաժողովը որոշեց գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

1.4 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| | | |
|---|---|---|
| 1 | «Օվացիա» Պրոդյուսերական Կենտրոն ՍՊԸ | բավարար |

Ընդունվել է որոշում կողմ - 3, դեմ - 0:

1.5 «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց. գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9,10,11 և 12-րդ չափաբաժինների մասով «Օվացիա» Պրոդյուսերական Կենտրոն ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված հայտ և ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

1.6 Հանձնաժողովը որոշեց.

Գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագիրը կնքելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրը, ժամը 11:00-ին, Խանջյան 19/1, 4-րդ հարկ 8-րդ սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | Շ. Նազարենկո | |
| Անդամներ՝ | Ս. Գասպարյան | |
| | Ա.Աղաջանյան | |
| Քարտուղար՝ | Ա.Հարությունյան | |